

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.715  
8-53

ШРӨН



ШРЧШЛЕР

30 MAY 2019

891.715

4-53

№

ՎԿ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


5

Ա. ՎԵՐՏԻՆԻՆ

# Ա Բ Ձ Ի Ա Բ Կ Ա Ծ Ն Ե Բ Է

(Սպիտակ արջի իր մասին արած պատմությունը)

Ռուսերենից թարգմանեց ԽՈՃԻԿ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

№ 203

1924

## ԱՐՁԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԿԱՀԵՆԵՐԸ ՄՐԱԺԱՂԲԵԼ Ե Գ. ՄԻՐԻՄԱՆՑԱՆԻ  
 ՀՐԱՏԱՐԱԿՈՎԹՅՈՒՆԸ  
 ՇԱՊԻԿԸ՝ ԿԱՐՈ ՀԱԼԱԲՑԱՆԻ



10927-54 (17668-54)

**Փոթորիկը** այնքան եր սաստկացել, վոր քամուց դողում եր  
 ամբողջ փայտաշեն գաղանանոցը, և թվում եր, թե կտուրը հիմա  
 պիտի պոկվի ու բուքը խեղդի գաղաններին։ Գիշերային խավարի  
 մեջ փայլում եյին միայն վազրերի աչքերը և լսվում կապիկների  
 տնքոցն ու հառաչանքը։ Փիղը կանգնել եր լուռ և մտազբաղ։ ուղ-  
 ար, յենթադրելով, թե գտնվում ե անապատում, չոքեց և պարզեց  
 վիզը։ թութակը գլուխը թեղի տակ դրած քնեց ու սկսեց խոսել  
 յերազում։

— Ո՞Փ, ինչ ցուրտ ե,—հանկարծ հոգոց հանեց կապիկը,—չեմ  
 կարող քնել, ամբողջովին դողում եմ... Յերանի շուտով մեռնեյի...»

Նրան վորպես պատասխան, գաղանանոցի խորքերից լսվեց  
 սպիտակ արջի ձայնը։

— Շոգ ե, շոգ ե, շոգ ե... Ուղար գլուխը բարձրացրեց ու  
 ողում հոտոտաց։ Արջի գանդակը գտնվում եր նրանից վոչ հեռու։  
 Նա արջից վախենում եր, բայց հետաքրքրությունը նրան սիրտ  
 տվեց և նա զարմացած հարցրեց։

— Դու շոգո՞ւմ ես, բայց դու ո՞վ ես, կարծեմ միայն դո՞ւ յես,  
 վոր քո վիճակից չես գանգատվում։

**Սպիտակ արջը** գլուխը տրտմությամբ շարժեց։

— Չեմ գանգատվո՞ւմ,—պատասխանեց նա,—ինձ համար այս-  
 տեղ շատ ավելի վատ ե, քան ձեզանից վորևե մեկին։ Այստեղ իմ  
 տանջանքներին ավելանում ե և անտանելի շոգը։

— Ինչպիսի՞ յերկրից ես դու, —հարցրեց ուղար։

**Սպիտակ արջը** հոգոց հանեց։

— Եես ծնվել եմ Հյուսիսային Սառուցյալ Ովկյանոսի ավերին,  
 —սկսեց նա, —այն յերկրներում, ուր վոչ մի մարդ չի ապրում,  
 ուր շարունակ ձմեռ ե, ուր ովկիանոսի մոայլ-կանաչավուն ալիք-  
 ների վրա լողում են բլրաչափ սառցակույտեր, ուր ամբողջ կես տա-  
 րի գիշեր ե, վորին հաջորդում ե վեց ամիս տեղ ցերեկը։ Եես այն  
 ազատ, գեղեցիկ բայց անմարդաբնակ վայրերից եմ, վորտեղ ազատ  
 լողում են կետերը, վորտեղ հյուսիսափայլերը լուսավորում են գի-

շերները և վորտեղ չգիտեն ինչ բան ե կրակն ու ջերմությունը:  
— Իսկ ի՞նչպես այստեղ ընկար:  
Սպիտակ արջը նորից տրտմությամբ շարժեց գլուխը:  
— Յեթե ուզում ես, ապա կպատմեմ իմ պատմությունը, —  
պատասխանեց նա, — բայց արդեն ուշ գիշեր ե, կարծեմ հոգնել ես  
և ուզում ես հանդստանալ:  
— Վոչ, — պատասխանեց ուղարք, — հիմա ել քունս չի տանում,  
պատմիր, թե ուզում ես:

Սպիտակ արջը տեղափորվեց և սկսեց իր պատմությունը.  
— Յերբ որերը կարճանալ սկսեցին ու աշունը յեկավ, մայրս  
իսկույն ձնակույտերի մեջ փոս փորեց, մտավ նրա մեջ ու պառ-  
կեց: Բուքը փչեց, ճյունը սկսեց մաղվել ու մորս ծածկեց այդ փո-  
սի մեջ: Նա խոսման եր, ամիսներով լույս աշխարհ դուրս չեր  
դալիս, չեր ուտում ու չեր խմում...

— Հապա ի՞նչպես կարողացավ կենդանի մնալ, — հարցրեց ուղարք:  
— Ամբողջ ամառվա ընթացքում այնքան ճարպ եր հավաքել,  
վոր կես տարի շարունակ կարողացավ ապրել առանց ուտելու.  
այնպես, վոր վորքան նա քաղցում եր, այնքան պակասում եր նրա  
ճարպը, ու մնում նրան և թվում եր, թե ինքը կուշտ\* ե:  
Զյունե փոսում շատ փափուկ եր և հաճելի: Մորս շուրջը մի քա-  
նի սաժեն բարձրությամբ նստած եյին ճյան շերտեր այնպես, վոր  
քամին չեր կարող համնել մինչև նրան: Հունվար ամսի մոտ, ծնվե-  
ցինք յես և քույրս: Սպիտակ արջերը միշտ ծնում են յերկու ձագ:  
Մենք շատ սիրունիկ արջի քոթոթներ եյինք՝ սկյուռի մեծությամբ:  
Տարուինակ եր թվում, թե այդպիսի մի հսկայական կենդանի, վոր-  
պիսին մեր մայրն եր, վորը յերբ կանգնում եր յետեվի վոտքերի  
վրա՝ բարձրությունը սաժենից անցնում եր, և վորի կշիռը 30 փութ  
եր, — հանկարծ ծնել եր մեզ նման փոքրիկ ձագուկներ... Մենք  
ունեյինք քնքուշ, թափլի նման աղվամազ: Մենք նման եյինք գըն-  
դակների: Մինչև ապրիլ մենք ծծում եյինք մեր մոր կաթը, և նա  
այդ ամբողջ ժամանակը առաջվա նման վոշինչ չեր ուտում: Վեր-  
ջապես, ապրիլին, մեր ձնե փոսում հանկարծ ինչ վոր տարուինակ  
բան տեղի ունեցավ: Կարծես թե ինչ վոր տեղից, հենց ձյունի  
միջով ներս թափանցեց լույսը: Արդեն պարզ կերպով կարողանում  
եյինք տեսնել թե մեր մորը և թե իրար: Այդ ժամանակ, արդեն  
մենք վոչ թե սկյուռի, այլ շան չափ եյինք, իսկ մեր մայրը այնքան  
եր լղարել, վոր միանգամայն ազատ կարողանում եր շարժվել փո-  
սում: Նրա ամբողջ ճարպը սպառվել եր իրանու մեզ կերակրելու  
համար: Մենք ել եյինք զարմանում, վոր նա կարողացավ ամբողջ

կես տարի ձյան տակ պառկել և վոչինչ չուտել:  
— Ինչ տարուինակ բաներ ես պատմում, — սպիտակ արջի  
խոսքը կարեց ուղարք, — մի՞թե, կենդանի արարածը ամբողջ վեց  
ամիս կարող ե մնալ առանց կերակրի:  
— Դու չես կարող պատկերացնել, — շարունակեց սպիտակ ար-  
ջը, — թե եգ արջը ամառվա ընթացքում ինչքան ճարպ ե հավաքում:  
Աշնանամուտին նա այնքան չաղ ե լինում, վոր դառնում ե կլոր՝  
վորպես գնդակ: Սպիտակ արջերը, վորպեսպի կարողանան հավաքել  
ճարպի այդպիսի քանակ, ստիպված են այնքան շատակեր լինել,  
վորքան ուրիշ վոչ մի կենդանի: Նրանք ամբողջ որը ուտում են:  
Նրանք սքանչելի կերպով լողում են ու ձուկ վորտում: Մորթի տա-  
կի ճարպը նրանց ոգնում ե մնալ ջրի յերեսին: Նրանք սուզվում  
են ամենախորը տեղեր ու այնպես վարպետությամբ անշարժա-  
նում, վոր ամենազգուշ ձուկն անգամ ընկնում ե նրանց յերախը:  
Յերբեմն ընկնում են սառցակույտերի կամ սառցադաշտերի վրա,  
հեշտությամբ բռնում են բեկեռային թոշուններ և ուտում: Չնա-  
յած նրանց արտաքին հաղթանդամության, աներեկակայելի ճար-  
պիկությամբ նրանք մագլցում են սառցե-ժայռերի վրա, թոշուն-  
ների ըներից գողանում ձու և անուշ անում: Պատահում ե, վոր  
նման արկածների ժամանակ, նրանք գլորվում են սառցե-ժայռե-  
րից, բայց այդ նրանց համար վտանգավոր չե: Ճարպի և թափա-  
մազ մորթու շնորհիլ նրանք մնում են անմնաս:

Դեռ գլորվելուց հետո, գլուխները որորում են, կարծես դրա-  
նով ուզում են ասել, թե նրանց համար վորքան ծիծաղելի յե այդ  
բանը: Բայց հիմի շարունակեմ իմ մասին:

Փարնան հոտն առած, մայրս սկսեց թաթերով փորփրել ձյունը:  
Նա իր սուր ճանկերը խրում եր մեզ ծածկող ճյան զանգվածի  
մեջ ու հաճելի յեր տեսնել, ինչպես սառույցի փշուրները, սուր  
ասեղների պես, ցայտում եյին ամեն կողմ:

— Մայրիկ, զու քո թաթերը կփչացնես, հետո կցավեն  
նրանք, — ասացինք մենք:

Նա ծիծաղեց, և մեկնեց գեպի մեզ իր առջեկ թաթերը:  
— Վոչի՞նչ, — պատասխանեց նա, — մի՞թե չեք տեսնում, վոր  
մեր թաթերը պատած են մորթով: Աշխարհիս բոլոր կենդանիները  
քայլում են բորիկ, միայն մենք, սպիտակ արջերս ենք, վոր թա-  
թերի վրա բուրդ ունենք: Յերբ սառույց ենք ջարդում, ցավ չենք  
զգում, իսկ յերբ վազում ենք սառույցի վրայով չենք սայթաքում:  
Ու վերստին սկսեց իր գործը: Վորքան նա քանդում եր մեզ  
պատած սառցախառը ձյունը, այնքան մեր փոսը լուսանում եր ու

մեր ականջին հասավ մոնչոցի նման ինչ վոր ձայն։ Մայրս պատասխանեց նույնպիսի մոնչոցով։

— Այդ ո՞վ ե, մայրիկ, — հարցրինք մենք։

— Ձեր հայրն ե, — պատասխանեց նա, — նա ամբողջ ձմեռը չի քննել, թափառել ե մեր փոսի շուրջը և սպասել, թե յերբ ձեզ դուրս կրերեմ փոսից։ Այսոր մենք նրան կտեսնենք։ Խեղճ ամբողջ ձմեռը տանջվել ե մենակությունից։ Զե՞ վոր արու արջերը ձյունե փոսերում չեն ապրում։

Հայրս մեր հոտը առնելով, սկսեց բարձրաձայն մոնչալ։ Մայրս նման մոնչոցով պատասխանում եր նրան։ Մենք անհամբերությամբ սպասում եյինք, թե յե՞րբ դուրս պիտի գանք փոսից։ Դրաից մեր ձյունե ծածկոցը քանդելուն ոգնում եր և հայրս։

Ահա ողի թարմ հոսանքը լեցվեց մեր փոսը և մենք առաջին անգամ տեսանք լույսը։ Մայրս առաջ դուրս հրեց ինձ, հետո քրոջս, ապա ինքը դուրս յեկավ։

Խոսքերով չեմ կարող նկարագրել այն պատկերը, վոր բացվեց մեր աչքերի առաջ։ Անհուն տարածությամբ փոված եր ձյունածածկ մի հարթավայր, վորը փայլվում եր արեվի պայծառ ճառագայթների տակ։ Կապտավուն յերկնքում ամսի կտոր չկար. հեռու հորիզոնի վրա մոնչում եր ովկյանոսը ու նրա փիրուղյա մակերեւվույթի վրա լողում եյին սառցե լեռներ — այնքան շողշողուն, վոր նրանց վրա նայելիս մեր աչքերը ցավում եյին։ Նրանք ունեյին զարմանալի տարորինակ ձեվեր՝ միջնադարյան դղյակների, յեկեղեցու, զանգակատան կամ զանազան կենդանիների հսկայական զլուկների նման։

— Ահա ձեր հայրը, — ասաց մայրս։


Մեր դիմաց տեսանք խոշոր, գեղեցիկ սպիտակ արջ։ Նա մուտեցավ մեզ, հոտուաեց մեզ ու մորս՝ ու հանկարծ, կանգնելով յետեղի վոտքերի վրա, ուրախությունից սկսեց պար գալ։ Մայրս ել կանգնեց, մենք ել — ու չորսով սկսեցինք պարը։ Հետո սկսեցինք խաղալ ու թռչկոտել։ Հոգնելուց հետո ծծեցինք մեր մոր կաթը։ Հոգնածությունից մայրս հազիվ եր վոտի վրա կանգնում։

— Իսկ հիմա վորսի գնանք, — դիմեց մորս հայրս, — դու ամբողջ կես տարի քաղցել ես. ուտելու պետք ունես։

Մենք քայլեցինք գեղի ովկյանոսի ափը։ Այսաեղ մայրս ընկավ ջրի մեջ, յերկար լողաց ու խորասուզվեց։ Նա ձկներ եր վորսում և ուտում։ Հայրս հետեւց նրա որինակին։ Եերբ նրանք դուրս յեկան ափ, այնքան ուրախ եյին, վոր սկսեցին կոխ բռնել։ Մենք կանգնել եյինք մի կողմ և զիտում եյինք այդ հետաքրքիր տեսա-

րանը, թե ինչպես յերկու խոշոր արջեր, կուշտ ուտելու հաճույքից, փաթաթվում եյին թաթերով և աշխատում իրար հաղթահարել։ Ապա յերկուսով ել փովեցին ափի մոտ, հենց սառույցի վրա՝ հանգստանալու։ Յես և քույրս բարձրացանք մորս մեջքին ու նիրհեցինք։ Սառնամանիք եր, բայց այդ մեզ համար նշանակություն չուներ. մենք քաղցր քնեցինք։ Փայլում եր կենսուրախ արել. անհանգիստ ովկյանոսը աղմկում եր, ու մի քանի հարյուր վերստի վրա չըկար մեկը — մեր հանգիստը խանգարող։

Այդ վարկյանից մեզ համար սկսվեցին յերջանիկ որեր։ Մենք տեղից — տեղ եյինք տեղափոխվում։ Մայրս մեզ սովորեցրեց լողալ և սուզվել ջրի մեջ. ցույց տվեց, թե ինչպես պետք ե մազցել սառույցի վրա, ու մենք զվարձանում եյինք լողացող սառույցների ձյունածածք մակերեւույթի վրա և վայելում կյանքը։ Սովորաբար, կշտանալուց հետո, մենք խաղում եյինք, կամ կոխ բռնում. իսկ յերբ հոգնում եյինք՝ հանգստանում մորս մեջքի վրա։




Յերբ յես, կամ քույրս հիմարանում եյինք ու չեյինք լսում մեր մորը, նա դնչով հրում եր մեզ ու մենք գնդակների նման զլորվում եյինք գետնին։ Մի խոսքով — մենք շատ կենսուրախ եյինք ու ընտանիքով ալրում եյինք մեզ համար։

Մի անգամ հայրս կանգնեց ու սկսեց ոգում հոտուալ։

—Յես ինչ վոր հոտ եմ առնում,—ասաց նա։  
Ինչ հոտ,—հարցրեց մայրս։  
— Այստեղից մի քանի վերստի վրա, դեպի արևելք, ինչ վոր  
տեղ ընկած պիտի լինի սատկած կետ։ Դնանք ուտենք։  
— Գնա՞նք։

Ու մենք չորսով ուղևորվեցինք դեպի այն կողմը, վորտեղից  
հորս հասել եր կետի հոտ։ Դա ինչ վոր շատ հեռու յեր, վորտեղ  
մենք, փոքրերս, դեռ չեյինք յեղել և հարկավոր եր յերկար ժամա-  
նակ գնալ։ Մենք քայլում եյինք սառցաղաշտերով, մաղլցում եյինք  
լեռներով ու գնդակների պես, հաճախ գլորվում։




Մենք քայլեցինք համարյա մի ամբողջ որ. և յեթե մենք ել  
չառնեյինք կետի հոտը, ապա չպիտի հավատայինք հորս, այնքան  
մեր տեղից հեռու յեր ընկած լեշը։ Բայց մեր հոտառությունը մեզ  
չեր կարող խարել. սպիտակ արջերը մի քանի վերստի վրա առ-  
նում են անգամ ամենաթույլ հոտ. զբա համար համարձակ գնում  
եյինք առաջ։ Վերջապես, մի քանի ժամ գնալուց հետո, հայրս իր  
սրատես, անթարթիչ աչքերով նայեց հեռուն և ասաց.

— Ահա՛, կետի շուրջը արգեն տասներկու ուրիշ արջեր են  
հավաքվել։ Վա՛յ թե նրանք ձեզ նեղացնեն։

Դուք մնացեք այստեղ ու սպասեցեք ինձ. յես յերկու ժամից  
կվերադառնամ և ձեզ ուտելու բան կբերեմ։

Մենք մնացինք, իսկ նա մենակ առաջ գնաց։ Մենք տեսնում  
եյինք, թե ինչպես նա հպարտությամբ առաջանում եր դեպի կե-  
տը, ինչպես մոտեցավ ու սկսեց ճաշել և, յերբ կշտացավ, սկսեց  
մյուս արջերի հետ խաղալ ու կոխ բռնել։



Յերեկոյան մոտ նա վերադարձավ մեզ մոտ, մեր առջև դրեց

մի մեծ կտոր կետի մախ, խաղաց մեզ հետ և ուղևորվեց դեպի նույն աեղը:

— Ո՞ւր, — հարցրեց մայրս:

— Մնաք բարով. — պատասխանեց նա. — Ել մենք իրար չենք տեսնի. յես ձեզ համար արի այն, ինչ կարողացա. դուք յերեխաներ, արդեն գիտեք լողալ և ձեռք բերել ձեզ համար սնունդ. Ել յես ձեզ հարկավոր չեմ: Յես պիտի միանամ այդ կետի շուրջը հավաքված տասներկու արու արջերի խմբին. մենք պիտի խմբով թափառենք ու հոդանք միայն մեր մասին:

Նա մեզ հրաժեշտ տվեց և հեռացավ. մենք մնացինք մենակ: Յերկար, ձյունածածկ տարածություններ անցնելուց հետո վերադանք մեր տեղը: Մենք անընդհատ քայլում եյինք. մեզ համար միևնույն եր՝ ուր գնալ, վորովհետեւ ամեն տեղ մեզ համար թե տուն եր, թե տեղ: Մենք վորառում եյինք ձուկ, յեթե ճանապարհին պատահում եյին, ուտում եյինք բեվեռաբնակ թոշունների ձըվեր, իսկ յերբ վոչինչ չեր լինում, ապա բավարարվում եյինք սունկերով և մամոռվ:

Մի անգամ մենք ընկանք մի փոքրիկ կղզի, վորի վրայից սառուցը մասամբ հալվել եր, նրա վրա տեսանք ինչ վոր թթու հունդեր: Նրանք հասել եյին, չնայած մեր հյուսիսային կարճատես ամուն, յերբ ձյունն անգամ բոլորովին չի կարողանում հալվել:

— Կերե՛ք, կերե՛ք. — ասաց մայրս. — սրանք շատ համեղ հունդեր են:

Մենք սկսեցինք ուտել, ու շատ չանցած, ամբողջ կղզու վրա չթողինք վոչ մի հունդ:

Ոգոստոս ամսից արդեն փչեցին հյուսիս արևելյան քամիները, փաթիլ-փաթիլ սկսեց տեղալ ձյունը, իսկ սեպտեմբերին այնպիսի սառնամանիքներ սկսվեցին, վոր մայրս մտահոգվեց մեր առողջությամբ և ուժեղ բուքերի ժամանակ ամբողջ զիշեր մեզ պահում եր ձյունի տակ: Մենք պառկում եյինք ձյունի տակ, մայրս ել պառկում եր վրայից ու այնպես տաք եր լինում, ինչպես այն ձյունն փոսում, վորտեղ մենք ծնվեցինք: Յերբ գալիս եր կերակրվելու ժամանակը, մայրս մեզ հանում եր ձյան տակից ու գնում եյինք վորսի:

Մի անգամ ել եղանակ, սովորականի նման, գնում եյինք ովկիանոս-ձուկ վորսալու, յերբ հանկարծ մայրս կանգնեց և նայեց շուրջը:

— Մենք շուտով մի լավ ավար կունենանք, — ասաց նա, — հեռեցեք ինձ:

Մենք հետևեցինք նրան և շուտով մեր դիմաց տեսանք մի շոգենավ: Նա մնացել եր սառույցների մեջ. ամբողջ պատվել եր սառույցով: Նրա ծխափողերից ծուխ չեր բարձրանում, նրա ամբողջ սարքը ծանրացել եր սապցի գուշաներից:

— Սա ինչ ե. — հարցրինք զարմացած:

— Դա շոգենավ ե, — պատասխանեց մայրս, — նրանով այստեղ մարդ ե յեկել: Անմիտ, նա ցանկացել ե համար հյուսիսային բեկվեռին ու ահա կանդ ե առել սառույցների մեջ: Կարծես նա չգիտե, վոր այս տեղերում կարող ենք ապրել միայն մենք:

Շոգենավի մեջից իջեցրված եյին ուտեստեղենով լի արկղներ և մեկնելու պատրաստ սահնակներ: Ըստ յերեսույթին մարդը վորոշել եր շոգենավը թողնել բախտի քմահանույցին և այսաեղից յետ գնալ արդեն սահնակով: Շոգենավի միջից լսվում եյին մարդկային ձայներ և ինչ վոր գաղանների վոռնոցներ:

— Այդ ովքեր են վոռնում. — հարցրինք մորս:

— Շներ են, — պատասխանեց նա, — մարդը նրանց իրեն հետ բերել ե, վոր շոգենավը սառույցներում մնալու դեպքում լծի նըրանց ահնակներին ու վերադառնա:

Մենք լսում եյինք շան վոռնոցը և այլայլվում:

— Մայրիկ, մենք սոսկում ենք շներից, — ասացինք մենք:

Մայրս կանգնեց և սկսեց մըտմըտալ:

— Շներից յես ինքս ել եմ վախենում, — պատասխանեց նա, — նրանցից ձեր հայրն ել եր վախենում: Այստեղ — միակ կենդանին ե, վորից սպիտակ արջը վախենում ե: Համենայն դեպս — գուցե նրանք մեզ չնկատեն ու կարողանանք գոնե մի արկղ ջարդել ու ապուխտ վախենել: Դուք չգիտեք, թե ինչքան քաղցր ուտելիք ե ապուխտը:

Նա մոտեցավ մարդու պատրաստած ապրանքին, հոտուեց ամեն կողմից և զգվանքով շարժեց զլուխը.

— Յես սխալվեցի, — ասաց նա, — ապուխտ չի յեղել: Այդ արկղներում մեր, արջերիս մաից ե դարսած... Մարդը առանձնաշրել ե ձարպը, վոր նրան դուք չի գալիս, և թողել ե միայն միսը, վոր նրա համար նույնչափ համեղ ե, վորքան և ապուխտը: Շուտ, յետ դառնանք:

— Կերցրու մեզ արջի միս, — ասացինք մենք:

— Ինչ եք ասում, ինչպես կարելի յե, — պատասխանեց մայրս, — արջն ել արջի միս ուտի՞...

Ու հրեց մեզ իր դնչով, վոր վորքան կարելի յե շուտ յետ փախչենք:

Այդ ժամանակ շոգենավի վրա յերևաց մարդը։ Մեզ տեսնելով նա բարձրաձայն կանչեց մյուսներին։

— Շուտ, շուտ, արջեր են մոտեցել մեղ, կրակենք նրանց։

Մենք այսպես վախեցանք, վորպես չեյինք վախեցել մեր կյանքում։ Մենք յերբեք մարդուն չենք զիպչում, նույնիսկ նրան տեսնելիս թողնում ենք ու փախչում։ Այդպես արինք և այդ ժամանակ. մենք մարդկանցից փախչում եյինք, վորքան ուժ ունեինք, իսկ յերկու մարդիկ, հրացաններով հետևում եյին մեղ։ Մենք տեսանք, վոր մարդիկ ավելի արագ են վազում, քան սպիտակ արջերը։ Վորպեսզի արագացնի մեր փախուստը, մայրս տատամներով վերցնում եր մեկ ինձ, մեկ քրոջս ու եղած վազում։ Յերբեմն քրոջս առնում մեջքին, իսկ ինձ բռնում ատամներով ու յերկուսի ել տանում։ Մենք հասկանում եյինք, վոր մեր դրությունը վատանգավոր ե, գլուխներս կորցրել, չգիտեյինք ինչ անել, ինչպես փրկվել։

Հանկարծ—կրակո՛ց. քույրիկս, վոր նստած եր մորս մեջքին, հառաչեց և զլորվեց ձյան վրա. ալ-կարմիր արյունից նրա շուրջը դոյցավ ճակ, վոր ներկեց նրա սպիտակ մորթին։

— Վայ, թաթի՛կս, թաթի՛կս, — ճաց նա. — թաթիկս ցագո՛ւմ ե։

Մայրիկս վրա պրծավ ու սկսեց լիզել նրա վերքը։

— Ի՞նչ ես անում, — ասացի յես, — փախչենք շուտով, միթե չես տեսնում, վոր մարդը մոտենում ե։

Մայրիկս տրամությամբ գլուխը որորեց։

— Այժմ ամեն ինչ վերջացավ. — ասաց նա. — քույրդ վիրավոր ե, հիմա կկորչենք և մենք։ Մայր արջը, իր ձագերին յերբեք չի քում։ Յերբ նրանք կորչում են, կորչում ե ինքն ել նրանց հետ։

Քույրս ցավից դողում եր ու կուչ գալիս։ Խեղճ, նրա աչքերում վնրքան տառապանք կար։ Ինչու, ինչու մարդը վիրավորեց նրան։ Յես նայեցի նրան, և սարսափը համակեց ինձ. բայց և խիղճս սկսեց տանջել ինձ. յես ուզում եյի վերցնել նրան և տանել ինձ հետ։

Մայրս մոտեցավ և դնչով սիրալի՛ր հրեց նրան։

— Արիացիր, — ասաց նրան, — թող տատամներովս վերցնեմ քեզ ու տանեմ։

Բայց այդ ժամանակ յերկրորդ անգամ լսվեց կրակոց և գնդակը դիպավ մորս փորին։ Նա ցավից մռնչաց, կանգնեց յետևի վոտքերի վրա և աչքերը փայլեցին թշնամությամբ ու ատելությամբ։

— Զմոտենաս, — գոռաց նա մարդուն, — յես իմ կյանքը աժան չեմ տա։

Մարդը — արջի լեզուն չհասկացավ և հարձակվեց նրա վրա։

Մայրս սպասեց, մինչև նա մոտեցավ. ապա մեղ թողեց մենակու սկսեց կովել նրա հետ։ Նա զլորեց մարդուն ձյան վրա, զցեց տակը, ատամներով բռնեց հրացանը և մռնչալով յերկու կես արեց։ Այդ ժամանակ ոգնության հասավ յերկրորդ մարդը. իրար հետեւից լսվեցին յերկու կրակոցներ. մայրս տատանվեց և զլորվեց ձյան վրա։ Հետո նա արնաթաթախ վեր յելավ և տիսուր, կիսաքաշ մոտեցավ մեղ։ Համելով մեղ, նա պառկեց ձախ կողքի վրա։ Գետնին ընկած մարդը վեր թռավ, վերցրեց ընկերոջից ավելորդ հրացանը և վազեց մորս հետեւից։

— Ամեն ինչ վերջացավ, — հառաչեց մայրս, — մաք բարով, իմ սիրելի զավակներս. . . մենք ել իրար չե՞նք տեսնի, յերբեք. . .

— Մայրիկ, մայրիկ, — ճշացինք մենք և սկսեցինք լալ։

Նա դող-դողաց, ամբողջ հասակով մեկնվեց, աչքերը մաղվեցին և դադարեց շնչել։ Աննկարագրելի սարսափով յես և վիրավոր քույրս բարձրացանք մորս սառած դիակի վրա և սպասեցինք մեր վերջին։

Մարդը մոտեցավ մեղ։

— Զեմս, — ասաց նա ընկերոջը, — արջին դուք սպանեցիք, հետեւբար նրա մորթը ձեզ ե պատկանում։ Մսով կերպարենք ըներին։ Կարգազրեցիք զիստերը մեզ համար աղեն՝ ճանապարհին ուտելու։ Հետեւեցե՛ք, շները լյարդը չուտեն, ապա թե վոչ կ'սատկեն. արջի լյարդը թե՛ շան և թե՛ մարդու համար թունավոր ե։

Մենք սարսափով սպասում եյինք մեր վիճակին։

— Այս վիրավոր արջի ձագին, — շարունակեց մարդը, — պետք ե սպանել և նույնպես շներին կեր դարձնել։

— Իսկ մյուսին ի՞նչ անենք, — հարցրեց Զեմսը։

Մարդը մտածեց և ասաց.

— Քեզ մոտ վերցրու նրան. արջի ձագերը շատ զվարճալի և աշխատյժ են լինում։

Զեմսը բռնեց ինձ և կոխեց տոպրակի մեջ։ Յես ուրախ եյի, վոր ականատես չեղա, թե ի՞նչպես դանակով մորթոտեցին քրոջս։

Ինձ բերին շոգենավ և տախտակամածի վրա շղթայով կապեցին։ Յես նստած, սարսափով լսում եյի, ներքեւում, ինչ վոր տեղ փակված, շների հաջոցը, հիշում մորս ու քրոջս և տանջվում։ Ինձ համար բերում եյին ջուր և ուտելիք. յես ուտում եյի ու խմում, սակայն տհաճությամբ. յես ուզում եյի լինել սարցադաշտերի վրա, յես ուզում եյի մորս փաղաքանքները, վորից բախտը ինձ այնքան անսպասելի կերպով բաժանեց։

Վերջապես մարդիկ շոգենավից դուրս յեկան, հանեցին շնե-

րին, վորոնց տանելիս, վախից մորթուս մազերը բիղ-բիղ կանգնեցին: Շներին լծեցին սահնակներին, արկղները բարձեցին, ինձ տե-



ղավորեցին նրանց վրա, իրենք ել նստեցին ու քշեցին ուր վոր—դեպի հարավ:

— Մնաս բարով «Ժաննետա», — դառան դեպի շոգենավը, ու նրանց աչքերում յերևացին արցունքներ, — մաս' բարով առընդմիշտ:

Նրանք գլխարկները հանեցին, սկսեցին ձոճել ողում, ու շուտով մեր յերկու կողմը ձգվեցին սառցադաշտեր, սառցալեռներ, կողքից աղմկում եր ովկյանոսը, ապա նորից լեռներ ու դաշտեր և միայն չորս շաբաթվա ճանապարհորդությունից հետո, մենք առաջին անգամ տեսանք մարդկային բնակության վայրեր: Նրանք շինված եյին սառցից, իսկ նրանց մեջ բնակվող մարդիկ հագած եյին մեր, արջի մորթուց հագուստներ: Իսկ հետո մենք նորից հայտնվեցինք շոգենավի վրա, վորը լողում եր այնպիսի ովկյանոսում, վորի վրա սառույց չեր յերեսում: Վորքան շարունակում եյինք մեր ճանապարհը, այնքան ավելի տաքանում եր մթնոլորդը. յես հազիկ եյի շնչում, յես թուլացա շոգից, ու այդ ժամանակից՝ ել չեմ զգացել մեր բնեռային յերկրի հաճելի սառնամանիքը:


Կարիք կա՞ ասելու, թե ի՞նչ յեղավ հետո: Ինձ բերին Յեվրոպա ու ծախեցին գազանանոցին: Յես մեծացա, մարդու համար դառա վտանգավոր. ինձ փակեցին նեղ վանդակում. այն որվանից յես ել չգիտեմ ինչ բան ե ազատությունը, չեմ տեսել պայծառ յերկինք, վո՞չ ծով, վո՞չ սառույց, և միայն ու միայն այստեղ հալ ու մաշ եմ լինում շոգից, խեղդող հոտից և անմաքրությունից. Ժամերով կանգնում եմ նույն տեղում և, վորպես ժամացույցի ճոճանակ, որորում եմ գլուխս: Այսպես ինձ ավելի լավ ե: Զուկ Ալինելու պատճառով ինձ կերակրում են ձիու մսով, վորից զզվանքս ե գալիս, ու պայծառ ովկյանոսի վոխարեն, վորն ինձ այնքան անհրաժեշտ ե, վանդակումս զրել են տակառով պղատո՛ր, կեղտո՛տ, հոտա՛ծ ջուր:

Յեվ յես նստած այստեղ, տառապում եմ ու ամեն անգամ ինքս ինձ մի տանջող հարց տալիս, վորին վոչ մի կերպ չեմ կարողանում պատասխանել. ինչո՞ւ յեն մեզ այստեղ չարշարում, մի՞թե մարդկանց հարկավոր ե մեր տանջանքը, և միթե՞ նրանք չեն խղճում մեզ:

Սպիտակ արջը լոեց: Ուզու նրա առաջադրած հարցին չպատասխանեց—միայն խորը հոգոց հանեց:

Առաջվա նման կապիկը հազում եր ու թութակը յերազում խռոսում:





5162

Wey.

201